


ՏԵՐԵՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻՍ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիպտոսի համար տրեկն. ուղք դճ. 80
» » վեցամսեայ » 50
03 տր երկիրներ տարեկան ֆրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթաստի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղումն նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ԽՍՏԱԿՐՈՆՈՒԹԵԱՆ
ԴԻՄԱԿԻՆ ՏԱԿ

ԱՇԸՔԵԱՆ՝ ԽՐԻՍՏԵԱՆԻ ԴԵՄ

Խորէն Աշըքեան, նախկին տիրահաշակ
Պատրիարքը, ինքն ալ կը փորձէ իր դավանի
բաժինը ունենալ թուրքերուն յաղթութենէն
յոյներուն վրայ, նորէն հրապարակ իջեալ
խորատունկով: Բաւական չէ որ չաբաթը մէկ
անգամ Պատրիարքարան ու Երուսաղէմատուն
կայցելէ, այս կամ այն պատրուակով, ու ինք-
զինքին նեղ կը զգայ Մարքիգեղի թաքստոյը՝
ուր հինգ-վեց տարիէ հետէ ծակամուտ եղած
էր խայտառակաբար, հիմակ ալ լրագրաց մէջ
յօդուած գրելու կելլէ՝ կրօնային, ընտանե-
կան ամենէն փափակ խնդրի մը վրայ և տե-
սակ մը անգլիկոսեան վարդապետութիւն
քարոզելու պատրուակով՝ բիրտ յարձակումներ
կրնէ վեհափառ Հայրապետին՝ սիրեցեալ
Խորիման Հայրիկի դէմ: Կաթողիկոսական վեր-
ջին ընտրութեան պարագաները գիտցունե-
լուն համար գաղտնիք մը չէ թէ Աշըքեան
ի՞նչ էսպրիկներ գարծուց ան առեն՝ էջմիած-
նայ Աթոռը բարձրանալու տենջով, — մեծա-
դոյն փորձանք մը գաւառալու համար անշուշտ
ազգին գլխուն, ինչ որ չի յաջողեցաւ բարե-
բաղդաբար: Եւ յուսախաբ, պարտուած, ա-
մթահար, իր զայրոյթը մեղմացնելու միջոց
սեպեց՝ Հայրիկի ընտրութիւնը ծանուցանող
հեռագիրը պահել 24 ժամ: Այդ կատաղու-
թիւնը մինչեւ այսօր մարած չէ Արմաշի նա-
խորդ վանահօր ներսիդին, որ ամուսնալուծու-
թեան շուրջը բացուած վիճաբանութիւն մը
յարմար առիթ կը սեպէ, աստուածաբանի
հովեր առած, կոչաւար քննադատելու հա-
մար Մայր Աթոռի պատկառելի գահակալին
անօրինութիւնները:

Անցողակի, հակիրճ ծանօթութիւն մը տա-
լու համար, ըսենք թէ ապահարզանը (divorce)
հրատապ նիւթ է այս միջոցիս Կ. Պոլսոյ ազգ-
թերթերուն մէջ. ժամանակը ու պարագա-
ները բարեփոխած ըլլալ կերեւին ամենէն
խտաախրտներուն կարծիքն իսկ, և ընդհա-
նուր կերպով կը պահանջուի որ «զոր Աստ-
ուած զուգեաց մարդ մի՛ մեկնեցէ» պատ-
գամը իր օրինաւոր բացառութիւններն ունե-
նայ այլ եւս, ինչպէս ամեն քրիստոնեայ ու քա-
ղաքակիրթ ազգերու մէջ, և էրիկ մը՝ որ իր
կնկան լպիրշ վարմունքին պատճառաւ բաժ-

նուած է անկից, կամ չիկն, փոխադարձա-
բար, որ իր էրկան շուայտ ընթացքին առջեւ
առած քայլած է, չի դատապարտուին իրենց
կեանքին մինչեւ վերջը ամուրի ու դժբաղդ-
ապրելու: Այս աղետի անձագանդը գաւառ-
ներէն կուգայ մանաւանդ, ուր տասը-տաս-
ներկու տարի իրենց ամուսինէն լքուած պար-
կեշտ հարսեր կը հիւծին ու կը մղկին հօրենա-
կան տան անկիւնը. պաակի անլուծելութեան
վճիռը աւելի դառն կերպով զգալի եղած է
հաւատաւիտութեան պարագաներու մէջ ուր
մէկ կողմը կերթայ օտարի հետ կենակցիլ,
մինչ միւսը դարձեալ զրկուած կը մնայ երկ-
րորդ անգամ ամուսնանալու արտօնութենէն:

Խորիման Հայրիկ, կաթողիկոսական դա-
հը բարձրանալուն պէս, իր հայրական հողա-
ծութեան առարկայ ըրաւ ընտանի կեանքի
այս կենսական հարցը, և լուսամիտ, անա-
շառ ու կարեկից ուղւով՝ արտօնեց կարգ մը
ամուսնալուծութիւններ ու կրկնամուսնութիւններ:
Ժողովուրդ և լրագրութիւն, որոնց ձայնին
խուլ մնացած էր հոգեւորականութիւնը մին-
չեւ ան առեն, լայն շունչ մը առին ու բերկ-
րութեամբ ողջունեցին Հայրապետական ու
Սինօդական այս անօրինութիւնները որոնք ո՛չ
թէ ընտանեկան կեանքը կը քայքայեն, ինչ-
պէս պնդող խաւարամիտներ կան դեռ, այլ
աւելի՛ կ'ամրապնդեն զայն, մեղապարտ կող-
մին նախազգացունել տալով թէ ինքը կրնայ
դատապարտուիլ եկեղեցիէն, մինչ իր կենա-
կիցը պիտի արտօնուի երկրորդ անգամ պաակ-
ուելու:

Այս հարցն է ահա՝ որ այս անգամ վե-
րստին կարծարծուի Պոլսոյ հայ լրագրու-
թեան մէջ, ուր կառավարելի՝ ամուսնական
որոշ օրէնք մը սահմանել, հաշտեցունելով
քրիստոնեական սկզբունքները ընկերային ու
մարդասիրական պահանջումներուն հետ: Եւ
ահա՛, հրապարակ կը նետուի Խորէն Աշըքեան,
բողոքելու, ընդդիմանալու համար այս աղնիւ
բաղձանքին դէմ: Կուղէ՞ք նմոյշ մը իր ար-
տաւոյ գաւառանքէն:

«Ամուսնութիւնն այս ու կին երջանիկ ընելու
համար չէ՝ որ կրօնքն իրեն գործ ըրած է և խոր-
հուրդ կանուանէ».— նախկին Պատրիարքին խօսքերն
են ասանք զորս արտօնապէս տխուր հարկին մէջ
կը գտնուինք, գաղափար մը տալու համար մեր ըն-
թերցողներուն: Ու բիշ մը վարը, դարձեալ. «Ամուս-
նութիւնն երջանիկութեան համար չէ, այլ կեանքի
և գոյութեան պարտքը բաժնալու համար սահման-
ուած լծակցութիւնն արուի և իգի, որոյ մէջ երջան-
կութիւն չկայ, զգայական գոհացումներն երջան-

կութեան գործեր չեն. ծանրութիւն միայն կայ՝
ուզենք չուզենք՝ կրելի»:

Ասկից աւելի անքնական, արտաւոյ տե-
սութիւն մը կարդացած էիք ամուսնութեան
վրայ որուն նպատակը ամուսին երջանիկութիւնը
չէ եղեր: Թերեւս մտածէք թէ սերունդնե-
րու աճումը, ժողովուրդի մը բազմանալը պի-
տի նշանակէ. բնա՛ւ: Աշըքեան ան ալ կը
մերժէ:

Ամուսնութիւնը գաւառներ ծնանելու, պարտու-
արտած կերպով խնամելու, հասարակութիւնն ա-
ճեցնելու և զարգացնելու համար ալ չէ: Չե՞ս յի-
շեր որ ֆրիստուս ըսաւ. Աստուած քորեկն ալ
կրնայ Արքայաժողովուրդներ հանել:

Այս տրամաբանութեան ի՞նչ կըսէք. արդ-
եօք յօդուածագիր եկեղեցականը կը կաս-
կածի թէ ինք Արմաշի սարերուն քարերէ՞ն
ելած է, ու այդպիսի դիտակցութեամբ կը
պնդէ:

Շարունակենք:

Եթէ ամուսնութիւնը հասարակութիւնն աճե-
ցնելու և զարգացնելու համար ըլլար, հարկ կըլլար
նկատի առնուլ աւելի պնդակալով արուները, և
բողոքապատիկ թուով գաւառներ խնամելու և զար-
գացնելու ձեռնհաս բխրատեղիները. միւս կողմէ ալ
անկարենաբար ձեռքէն կրնար խլուլ ու զգայական
բուռն թափէ ուրիշ ոչինչ ունեցող շնորհապարգներն
ալ բաններ լեցունել՝ որ հասարակաց պատուոյն և
բարոյականին վրայ չի յարձակին:

«Բանտերը լեցունե՞լ» կը տեսնէք որ
Աշըքեան չի մոռնար իր չարաշուք idée fixe-
այս կրօնական հարցին մէջ ալ առաջ քը-
շել: Ու ժողովուրդին դէմ իր ունեցած
ատելութիւնը անուղղակի և անպատկառ կեր-
պով պաշտպանելու կելլէ աւելցունելով. «Ան-
բարոյական բազմութիւն մը երբեմն անհամար
«թուով ջրհեղեղը տարաւ և դարձեալ կը տա-
նի» (°): Որովհետեւ Աստուած և առաքինութիւն
«չեն նկատուի միլիոնաւոր թուով բազմութիւնն»,
«այլ ճշմարիտ մարդը, բարոյական մարդը»:
Ի՞նչ թունաւոր ակնարկութիւն մը, իղձ մը
կայ այս տողերուն մէջ, կը դիտէ՞ք: Եւ յե-
տոյ, «բարոյական մարդ» բացատրութիւնը
որքա՞ն խորթ կը հնչէ Աշըքեանի մը բերնին մէջ:

* * *

Երկար կըլլայ մէկիկ մէկիկ շեշտել իր
ամեն մէկ փաստերը, իրարմէ աւելի խորթ,
ներդաւաճաւ ու երբեմն ալ կեղծաւորաբար ծած-
կուած խտաախրտութեան քողին տակ: Անց-
նինք այն մասերուն ուր կաթողիկոսական տնօ-
րինութիւններուն դէմ բարբառելու անպատ-
կառութիւնը կուենայ,

Աստուծոյ ահաւորի արարչագործած որոշ օրի.

նախն և հրատարակած յայտնի հրամանին առջև՝
Հայրապետանոցի մէջ պատահած ամուսնալուծման
օրինակներ և նշաններ ի՞նչ արժէք կունենան:

Առաջին անգամ կը լսենք «Հայրապետանոց» բառին դործածումը, — էջմիածինը պզտիկցունելու ապուշ փորձ մը, — Մայր Աթոռին համար, և այն ուլ եպիսկոպոսի մը կողմէ որ իր վանքին սրահը «Վեհաբան» անուանել կուտար: Խորէն Աշըքեան մինչեւ իսկ չուզեր ընդունիլ թէ Վեհափառ Խրիմեան Կաթողիկոսի օրով տեղի ունեցած ամուսնալուծումներն ու կրկնամուսնութիւնները բանաւոր կերպիւ քննուած ու արդար դատուած պարագաներու կը վերաբերին, Սինդական որոշումով և «պատահմունք» այսինքն գիպուած կը նկատէ զանոնք, արժէքէ զուրկ: Ի՞նչ, միթէ դեռ այն ցնորքին մէջն է որ Ազգն ու Եկեղեցին իր պատրիարքութեան օրով տրուած աղետալի որոշումները պէտք է ընդունեն իբրեւ նուիրական ու յարգելի:

Ու լրբաբար, խրատ տալու կիլլէ Կաթողիկոսին:

Հայոց Եկեղեցին ո՛չ հին հանգամանքով և ո՛չ նորով, ամուսնալուծում չընդունիր, հեծութեամբ սրտի կաղթով՝ որ Հայրապետներն երկուցած ոգով իրենց պարտականութիւնը կատարեն, ուղիղ փորձապետեն, գայթակղելի զարտուղութիւններ տալու նուազին և այլն:

Եթէ կայ մէկը որուն համար մեր Եկեղեցին հեծութեամբ սրտի աղթելու էր որ «իր պարտականութիւնը կատարէր երկուցած ոգով, ուղիղ փորձապետէր, գայթակղելի զարտուղութիւններ չընէր», ան ալ ապահովապէս Աշըքեան Պատրիարքն է և ոչ թէ սրբազնասուրբ Հայրիկը:

Ս. էջմիածնայ պաշտօնաթերթը անմասն չի մնար յարձակումներու այս տարափէն. իբր թէ բաւական չլլային ռուս կառավարութեան նորագոյն խտրութիւններն Արարաթի նկատմամբ, Աշըքեան ալ իր կողմէ կուզէ վտարել անոր մէջէն հայրապետական կարգ մը որոշումները:

Կը փափագիմ որ, կը գրէ, էջմիածնայ ամուսնութիւն ամուսնալուծման ակամայ և անձա՛հ կարգադրութիւններ՝ օգտակար և պատուարեք անօրէնութեան մը պէս՝ պաշտօնական գործողութեանց և հայրապետական հրամանաց շարքին մէջ չի հրատարակէ, զի հրատարակային թերթեր, պատրաստ միշտ հաստատակաց ուղարկութիւնը գրողներու, տխուր բոցաբռնութիւններն՝ իրեւ ազատութեան, իրաւունքի և բարեկարգութեան պատկանող որոշ գործողութիւն՝ յանգէտս դրուատելով՝ պատճառ կըլլան որ մեղացեալ բարքեր աւելի եւս մեղկանան և ընտանիքներ կործանին:

Վեղարաւորի մը կողմէ անպատկառութիւնը երբէք այն աստիճան առաջ չէր տարուած՝ Արարաթի հրատարակութիւններն ու հայրապետական որոշումները իբրեւ «բարքերու մեղկացման ու ընտանիքներու կործանման» պատճառ ցոյց տուող: Եւ յետոյ, Աշըքեան այս միեւնոյն մտածումը ունենալէ հետի էր իր պաշտօնի վրայ գտնուած թուականին «հրապարակային թերթեր»ու մասին, որոնց մէջ հրատարակել կուտար, ի հարկին կառավարութեան ուժով, իր ազգամիաս, անարդար ու գրգռիչ շրջաբերականներն ու անօրինութիւնները, որոնց մէջ անմուսնալի է մանաւանդ ողբացեալ Նար-սէյ Սըբազանի դէմ հանած կոնդակը, արդիւնը ստորաբարշնախանձու և կըքի, որ մահացու հարուած մը եղաւ Քնար Պանդխտի հանճարեղ հեղինակին,

որուն կեանքը քայքայեց ու խորտակեց . . .

Ազգին բարոյական դատապարտութեան դրոշմը կրող նախկին Պատրիարքին հետ, հեռու է հեռու, բանակուելի մտնելու անախորժ հոգն ստանձնել չուզեր Փարոս: Այդ երկարապատում յօդուածն իր ընդհանուր գծերուն մէջ ծանօթացնելով, ուղեցիկը միայն դադարաւոր մը տալ թէ տխուրութիւնը ու ցածուցիկութիւնը ո՛ր աստիճան կրնան առաջ երթալ վտարեալ Պատրիարքին գրչին տակ, որուն համար աւելի «աստուածահաճոյ» գործ է ազգ մը լուծելը քան թէ ամուսնութիւն. աւելին գրել չարժէր. մինչև անգամ կը մտածենք թէ ստորահարցելու քան մը պիտի ըլլար անոր հետ վիճաբանութեան մտնելը: Ո՛չ Խրիմեան Հայրիկի իմաստուն ու ազգասէր անօրինութիւնները պէտք ունին պաշտպանուելու Աշըքեանի մը յարձակումներուն դէմ, ո՛չ ալ ամուսնութեան նուիրական դատը և ընտանեկան պատուը ու Երջանկութեան պաշտպանութիւնը այդ անսակ նպատակաւոր «խտրութիւնութեան» մը առջև կրնայ տկարանալ: Մղումը տրուած է այդ դատին: Մայր Աթոռ, Պատրիարքարանը, հազեւորականութիւն, լրագրութիւն չի պիտի բանեն զայն: Փափագելի էր որ Թուրքիայէ դուրս հրատարակուող ազգային թերթերն ալ իրենց ձայնը ու կարծիքը միայնէին այս խնդրոյ մէջ, որ ամբողջ ազգութեան կը պատկանէ:

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ
ԴՐԱՒՏԻ ՎԵՐՋԻ ՏԵՍԱՐԱՆԻՆ

Տեսարանը կը ներկայացնէ այն ծառը որ ինք ամիսն անգամ մը պտուղ կուտայ: Անոր կոճղին տակ նստած են՝

Աղամ, հագուած ինչպէս ձուկերը ծովուն մէջ:
Եւս, օղբ տալ ըլլալուն՝ չափին անգամ հանած է:
Երկուքին վրայ ալ յղձութեան և յանցանք մը գործողի նշաններ կան:
Ասուած վերէն կը նայի:

Եւս. — Է՛յ հիմա . . .
Աղամ. — Ա՛յ ինչ կուզէ թո՛ղ ըլլայ:
Եւս. — Սիրտս թըփ-թըփ կը նետէ կոր, խեղճեթ, ատ ի՞նչ փորձանք է զԼուսն բերի:
Աղամ. — Նորէն մի՛ սկսիր, կայնէ նայինք, հարցունէ նէ բան մը ուշտուրիչ կընենք:
Եւս. — Խեղճիկ, հանգիստ կերպով կերթայինք կոր, ուղաճիղ չափ կեր խմէ, ամեն բան ձրի, աղւոր օղ, պատուական ջուր, սոխակներուն նուազաւոր հանդէսը, աստղերուն լուսավառութիւնը, ծաղիկներուն բոյրը, երկինքի պայծառութիւնը, և ասոնցմէ վեր կատարեալ ազատութիւն:
Աղամ. — Եւ անորմէ ալ վեր, աչքերուդ ցոլացումը, այտերուդ թաւշեայ կարմրութիւնը, սկզբնական մարդարեայ շարքը, մարմնուդ դեղձան ազդորթիւնը, ուսերուդ . . .

Եւս. — Ի՞նչ, նորէն . . .
Աղամ. — Ձի՛, ես ապերախտ չեմ, այո՛ ուսերուդ մարմարեայ ճերմակութիւնը, ձեռքերուդ անկիւնի յղկութիւնը, թեւերուդ . . .
Ասուած. — (Ձայնով մը որով պանդխտ քաջաւորները կողերդեն «գառտեա Տէր, գայնոսիկը») Պա՛յտն Աղամ, Պարոն Աղամ . . .
Եւս. — Ոտքդ պղծենեմ, հիմա կը մարիմ:
Աղամ. — (Երկուքին և զոգարով) Համով:
Ասուած. — Հո՛ս եկուր տեսնենք, ես ձեզի չըմօ՛ր այդ ծառին պտուղէն չուտէր:
Աղամ ու Եւս (Գլխիկոր՝ գետին կը նային, և պատուական մը չեն գտնէր):
Ասուած. — Քանի որ խօսքս չի բռնցիկ և անհնազանդ գտնուեցաք, իբրեւ պատիժ ձեր անկարգապահութեան, այսու կը դատապարտեմ զքեզ՝ Եւս, օրուան մեծագոյն մասը հագուած անցընելու (Եւ Աղամին դառնալով) Ձեքդ ալ, անաւակ, կը դատապարտեմ, կարծր կերպով արդուական չափիկը օձիքը՝ երկու մատներովդ կոճկելու: Եւ երկուքը միասին, այս վայրկեանէն կը հրաւիրեմ զբախտը ձեզ երթալու, որովհետեւ . . . ուրիշին վարձու պիտի տամ:

ՌԱՏԱՄԵՐ

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱԿԻՅ ԹԷ . . . ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ

Նիւ-Եօք Հերլտի կողմէ Հայաստան յրկուսած քղապիկցը, Տոք. Հիքուորթ, որուն կրկնեւանան հրեայ քաղաքն մը եւ բուրբ պաշտօնասարներ, շահ կանուի կրակի դուրսալ իր գոյնը: Ամերիկեան քերթին սանկաւնոյ ուղղութիւնը ծանօթ ըլլալով ամեն կողմ, առաջին օրէն երբ իմացուեցաւ թէ յափապէս մարդ ճանաչ կը հանէ Փոքր-Ասիոյ գաւառները շրջելու եւ «իրաց կացութիւնը նրկարգելու», մարգարէ ըլլալու պէտք չի կար գուշակելու համար թէ սոս ու սիւս ճեղկոսիւններու, զրպարսութիւններու շարք մըն ալ ա՛ն պիտի բարդէ հայերուն վրայ: Բայց Հիքուորթ, իր գրչին արտադրութիւնները կը փութայ նուիրելու նաեւ Պոլսոյ բուրբ քերթուն, թէ՛ հեռագրով եւ թէ՛ նամակով, իբր թէ անոնց մէկ խմբագիրն եղած ըլլար. այս պարագան կանխաճառած յէր շիսակը:

Ի՞նչ չիմացանք, եւ ի՞նչ հարկ, թէ Նիւ-Եօք Հերլտ որքա՛ն սխալներ ընցուց աղ փարձկան մարդուն գրածներովը, բայց բուրբ մամուլը կանոնաւորապէս կը հրատարակէ անոր նամակները. առաջինը քուսարեայ է Տրապիզոնէ: Մարդ ճշմարիտ նողկանք մը կը գգայ ճեսնելով ամերիկացի մը — այդ անունին անարժան, — որ արդարացունելու կեղծ բուրբերը՝ Տրապիզոնի արխանդէլ ջարդին մէջ, Պահրի փաշան ու զինուորները կը գովէ որոնք «խիստ մեծ ջանքեր քեր եւն եղեր հայ կիներն ու տղաները պաշտպանելու», թէն կը մոռնայ ըսելու — նոյն իսկ եթէ մեզը ըլլաւ իր այս վկայութիւն, — թէ ինչո՞ւ նոյն ջանքերը չեն քուս խեղճ երիկ մարդերն ալ պաշտպանելու համար մոլեգնած բուրբ խոստանիլ դէմ:

Նիւ-Եօք Հերլտի պատմութիւնը նոր հանգամանակ մը երեւան կուգայ ի Կարին, իր ուղեւորութեան երկրորդ կայանը. մոռնալով թէ ինք քղապետի կրեւոր միայն պաշտօն ունի, կամ շա՛ր եւս յիշելով թէ որո՞նց կողմէ յրկուսած է, ուսիկանական քննութիւններ կատարելու կը ձեռնարկէ. ահա՛ իր իսկ հեռագրին ֆանի մը տողերը.

«Տեղւոյս հայ անարշխապետու մասին ընդարձակ տեղեկութիւններ տալ, և ձեռք ձգելի անոնց շատ մը փնտաւար գրութիւնները զորս սուրհանդակով կը խրկեմ՝ ձեզ»:

Նազըմ մը կամ Հիւսնի մը եթէ ֆնական պոյսի եղջիւն գաւառները, այս ամերիկացի տոքթորն սարքեր ընթացք չի պիտի բռնէին ապահովապէս:

Տոք. Հիքուորթ կուեցունէ թէ ձիւներու հաշիւներ կը պատէ իր պոյսը առաջ ճանելու համար դէպ ի Գարքերոյ ու երգընկա:

Այս գնացով, չի պիտի զարմանանք եթէ օրին մէկը Սըր Կորսոն Պենէք ծանուցանէ իր լրագրին մէջ թէ Հիքուորթի իրաւաւորութեան սահմանն աւելի ընդարձակուած ըլլալով, Բաղէշի կամ Մուշի մէջ հայեր ձեռքաւարելու ու բանտարկելու ճաշու կեղծ:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսոյ դեսպանները կարենա՞ր որոշում մը տուեր են որ խնդրն հեռագրուած է եւրոպական թերթերուն : Կրէտէի դործերուն վրայ իրենց վիճաբանութիւնները . . . դադարնի պիտի պահեն : Էն խնդրի միջոցը առ է՝ իրենց անհամաձայնութիւնները պարտկելու և prestigeի վերջին միացորդը կարենա՞լ պահպանելու համար :

Գարառազցի երկու երեք նոր ընտրելիներու անուն ալ բերաւ Սուրհանդակը՝ կառավարչութեան պաշտօնին համար . չարժեր այլեւս յիշել :

Դեկտեմբեր 3ին Մարտիրոս համոզ թըղթասար շոգենաւր «լաւ լուրեր» տարեր է Կրէտէէն , և մասնաւորապէս Հանեայէն : Ընթերցողը պիտի հետեցունէ թէ կղզին խաղաղեւր վրայ է կամ թէ ինքնօրինութիւնը հաստատուելու մօտ . ընտել : Հոն գտնուող եւրոպացի զօրքերուն առողջապահական վիճակը գոհացուցիչ է եղեր . ահա՛ միակ լաւ լուրը եւրոպական դիւանագիտութեան համար :

—Թայմըի տեղեկութեանց նայելով, Դուռը կը սնդէ որ Պանք Օթոմանը 100,000 ոսկի կանխավճար մը եւս ընէ իրեն՝ ի հաշիւ Յունաստանի պատերազմական տուգանքին : Իսկ Պանքան կը պատախաճէ որ նախ և առաջ մեծ Տէրութիւնները պէտք է նկատուլ թեան տուուն Դրան վերջին շրջաբերականը, որու մասին պատախաճան մը տրուելէ առաջ ինք չի կրնար որ և է վճարում ընել :

—Աթէնքէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ լրագիրները յայտնութիւններով լեցուն են Էթնիկի Լեդերիսի, յունաց յեղափոխական ընկերութեան, անցեալ արարքներուն վրայ :

—Խաղաղական Թրիպոլիս լրագրին Եանիայի թղթակիցը կը պատմէ թէ տեղւոյն օսմ. իշխանութիւնը հարկադրուեր է մէկմէկ մէծիւր բաշխել զօրքերուն որոնք իրենց զորկանքներուն ու պէտքերուն չի գիմանալով կը սպաւնան եղեր ապստամբիլ :

—Յունաստանի պատերազմական նախարար Սմիլնիսի զօրավարը եւրոպացի սպաներ կը խնդրէ՝ հերքէն բանակին վերակազմութեան ձեւնարկելու համար : Իւրաքանչիւր մեծ տէրութենէ մէկմէկ սպայ պիտի ուղարկէ :

—Թայմը կը հաղորդէ թէ Ժէօն-Թիւրքի կուսակցութեան Բարիդի մասնախումբին նախկին գեր-նախագահ Էմին Առլան էֆէնդի Պորտոյի օսմ. ընդհ. հիւսաւորութեան պաշտօնն ընդունելու է :

—Մալթոօրոսաթօ իշխանը չուզեր վերստանանել Կ. Պոլսոյ հեղինակական դեսպանութիւնը և մտադիր է գիւանագիտական առաջադէպն քաջուելով՝ երեսփոխանական ընտրելի ներկայանալ այն շրջանակին որուն կողմէ կը մասնակցէր ատենօք Աթէնքի խորհրդարանին : Հաւանաբար Պ. Աթէֆանու, հաշտութեան բանակցութեանց երկրորդ պատուիրակը, Կ. Պոլսոյ դեսպան անուանուի :

Պուրթէն կը հեռագրեն թէ Էնթեքանցան Ռուս մէկ լրագրի տնօրէն Պ. Լաճովարի սպաննուեր է սուրով մեղաւարտի մէջ զոր ունեցած էր նախկին քաղաքապետ Պ. Ֆիլիքսիսի հետ, լրագրական վէճի մը հետեւանօք :

—Յրոնտական խորհրդարանի ծանօթ որոշումէն ետքն ալ, բարիպետ մասուլին մէջ բանակները կը շարունակուին Տրէյֆիւսի գործին շուրջ : Էնթեքանցան կը յայտարարէ թէ պիտի հրատարակէ այն պաշտօնագրերը որոնք Տրէյֆիւսի դատաւորութիւնն առաջ բերին , Տրէյֆիւսի և Վիլհէլմ կայսեր միջեւ փոխանակուած նամակներ որոնք Գերմանիոյ դեսպանատունէն գողցուած էին : Գեսարանը պահանջեր է որ ետ տրուին այդ նամակներ, սարսուռով յարարելութիւնները խղել, ապա վրայ՝ յանձնուեր են նամակները, լուսանկարով ընդօրինակուելէ ետք : Էնթեքանցանի այս լուրը պաշտօնապէս կը հերքուի :

—Այս Միքայէլ Հիւս Պիչ բանակաւորութիւն մը արտասաններ է ի Պրիւսիէ, ուր կըսէ թէ դէպ ի խարթում արշաւանքը տեղի պիտի ունենայ պատեհ վայրկեանին : Անգլ. կառավարութիւնը, եթէ հարկ ըլլայ, պիտի խնդրէ խորհրդարանէն՝ օգնել Եգիպտոսի, այս գործին կատարման մէջ :

—Չինաստանի մէջ երեք միսիոնարներու սպանման առթիւ Գերմանիոյ նաւային ցոյցը հետզհետէ կը դորանայ : Բէրլինէ կը հեռագրեն Ռիւդերի գործակալութեան, որ թէեւ չինական կառավարութիւնը տեղի տուած է Գերմանիոյ բոլոր պահանջներուն առջեւ, սակայն գերմանները չեն ուզեր մեկնիլ Քիւսո-Շաօն (զոր Եսթոնի միսիոնարն ալ տիտ Ընէն) : Ժէֆիոն և Տեյլլիքս մարտնամարտ վաղը Քիլին պիտի մեկնին դէպ ի Չինաստան, կայսեր եղբոր՝ Հանրի իշխանին հրամանատարութեան ներքեւ : Կայսրը անձամբ Քիլ գացած է ողջերթ մալթելու իշխանին ու նաւատորմին :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Հայ Հռոմէականաց Առաջնորդ Տ. Բառնարաս եպիսկոպոս Ազգահիւրեան երէկ մեր Առաջնորդարանը եկաւ ի փոխադարձ այցելութիւն Առաջն. Տեղապահ Տ. Յակոբ Ծ. վարդապետի և արժանաւայել ու սիրալիր կերպով ընդունուեցաւ :

Զէյթունէն հասած լուրերը հետզհետէ արտուր և ուշադրաւ կը դառնան :

Կ. Պոլսէն Տէյլի Բրոնիլի ուղղուած դեկտ. 7 թուականով հեռագիր մը կըսէ թէ Զէյթունի Հայերը ժամանակէ մը ի վեր պաշարուած են Բիւրտերէ և թէ ուտելիք չունին : Անգլ. թերթին թղթակիցը կը յարէ որ եթէ դեսպանական միջամտութիւն մը չըլլայ, այդ տարաբաղդները անօթութենէ մեռնելու վիճակին պիտի մասնուին :

ՏԵՂԱԿԱՆ

Բարձր. Խտիվը երէկ և առջի օրը Մոնթաղաս անցուց : Այսօր Գահիրէ կը վերադառնայ և վաղն իրիկուն Ապտինի պալատին մէջ հացկերոյթ մը կուտայ ի պատիւ Աւստրիոյ դիւանագիտական նախորդ գործակաւոր Մէգէրնիլի կոմսին որ կը մեկնի Եգիպտոսէ :

—Հանքային Պարտույ վարչութիւնը իր պահանջի գումարէն 520,000 ոսկի կը դնէ երմտական նախարարութեան արամադրութեան ներքեւ, Կրկու նոր փակոցներու (Barages) շինութեան համար :

—Խտիվին թարգմանութեան գիւանին պետ Ահմէտ Շէֆիք պէյ՝ եւրոպական դիւանին պետ կարգուեր է Ռուսէ պէյի տեղ, իր առաջին պաշտօնն ալ պահելով հանդերձ :

—Փրանսայի արքունական գերդաստանէն Հանրի ար Պուրպոն իշխանը «կոմս ար Սալթերման» անունով Գահիրէ եկած է իշխանուհիին հետ :

—Այսօր տեղի կուենայ ձմեռնային ձիարշաւներուն առաջինը Սթորիկնի Գիլպի մէջ ի Կէլիքէ :

Օգին գեղեցկութիւնը ենթադրել կուտայ որ մեծ բազմութիւն ներկայ պիտի գրուի այդ հասարակային հանդէսին :

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ԼՍԱՐԱՆԸ

Շարաթ գիշեր Ընթերցարանայ Ընկերութեան ճիշդ բարանը տեղի պիտի ունենայ ժամը 9ին :

Այս տնդամ պիտի ստեղծուի Տիար Գ. Շանթի իրեն նիւթ ունենալով Ենթարի տիւրէն մինչեւ Միջերկրական :

Ըստ սովորականին նուագածութիւն պիտի ըլլայ և երեկոյթին հրապոյր մը եւս աւելցունելու համար վիճակահանութիւն մը պիտի կազմակերպուի որուն պարգեւները պիտի ըլլան սիրուն անակնկալներ :

Վիճակահանութեան մասնակցելու համար բաւական է ըմպելի մը առնել :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Յառաջիկայ կիրակի գիշեր թատերական արտասովոր ներկայացում մը տեղի պիտի ունենայ Ապու-Խալիլ թատրոնին մէջ (Նոր Պազարին կից) Պէնլեան խումբին կողմէ :

Երթասարդ և ուշիմ գաղթականի մը կողմէ կօտորնի հոգաւոր մէկ խաղին, Խաղամոլին թարգմանութիւնն է որ մեծ պատրաստութիւնով բեմ պիտի դրուի :

Մանրամասնութիւնները Շարաթ օրուան թաւ :

ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ ԻՆՉ ԿԸ ՇԱՀԻՆ

Ապահովապէս այս հարցումը մեր հայ դերասաններուն հետ վերաբերութիւն չունի : Անոնց ամենէն երեւելին՝ Աղամեան, հիւանդանոցի մը մէջ մեռաւ և դեռ անցեալ օր Պոլսոյ մէջ թաղեցին խղճամիտ դերասան մը ու միեւնոյն առեն բարի և պատուական մարդ մը՝ Սիսակ որ յետին ծայր աղքատութեան մէջ մեռաւ՝ վերջի հինգ-տասը տարիները կէս կուշտ, կէս անօթի ապրելէն ետքը :

Խեղճ Աղամեան, խեղճ Սիսակ և Եաննք որ դեռ կենդանի են, լաւագոյն վիճակ մը չունին այսօր : Մեր դերասանական արդի խումբերը թէ՛ Պոլսոյ մէջ և թէ ի Գահիրէ հաղիւ կրնան չոր հաց մը ուտել շնորհիւ մեր ազգայնոց . . . անտարբերութեան :

Հեռուները չերթանք . անցեալ կիրակի գիշեր Պէնլեանի խումբը Մարիանի ներկայացումով՝ հարիւր ութսուն զրուշի գումար մը հասցրթ ունեցաւ, հարիւր ութսուն զրուշ . . . տասներկու հոգիի վրայ բաժանելի, այն ալ չաբաթը անգամ մը . պարզապէս մարդ կը սոսկայ և կարգահատի այդ բեմի աշխատաւորներու վիճակին վրայ :

Երբ մեր հայ դերասանը պատառ մը հացի ետեւէն կը վազէ՝ Եւրոպայի մէջ դերասաններ կան որ աղքատական հարստութիւններ կը գիւղեն : Հազարաւոր օրինակներ կրնանք մէջ բերել :

Պարնըմ, impresarioներուն թագաւորը, ճէննի Լինտ դերասանուհիին հետ Եւրոպայի գլխաւոր քաղաքներու մէջ ներկայացումներ տալով՝ ութ ամսուան մէջ երեք միլիոն ֆրանքի հարստութիւն մը շինած է :

Մալիպրան, տիեզերահռչակ երգչուհին, Լոնտոնի Տրուրի Լէյն թատրոնին տնօրէնութեան ամեն մէկ ներկայացման համար 3750 ֆրանք կատանար . Կրիզի՝ իտալացի երգչուհի

մը, երաժշտական հանդէսի մը մէջ երգելու համար 10,000 ֆրանք ստացած է: Բէզդըն-պուրկի մէջ՝ Թալիօնիի ի նպաստ ներկայացում մը 204,000 ֆրանք արտադրեց. և Լապլաշ՝ Վիլթօրիա թաղուհոյն անգամ մը միայն երգի դաս տալուն համար 1,000 ֆր. ստացած է: Իսկ Բաթթին, երգչուհիներուն նշանաւորագոյնը, տարին միջին հաշուով մէկ միլիոն ֆր. կը վաստկէր: Անգամ մը Բէզդըն-պուրկի մէջ նուագահանդէս մը տուած է որուն ներկայ գտնուելու համար հարուստ ամերիկացի մը մէկ թիկնաթուղին 250 անգլիական սկի վճարած է:

Իվէթ Կիլլէն, կէս-քօքօթ և կէս-երգչուհին, տարին 1,200,000 ֆր. կը շահի շնորհիւ իր ձայնին և... սեւ ձեռնոցներուն:

Սառա Պէռնարի և Քօքլէնի վաստակը քանի մը միլիոններու բարձրացած է:

Բատթէվաքի, հունգարացի դաշնակահար մը, 500 սկի կստանայ նուագահանդէսի մը մասնակցելու համար:

Էտուար աը Ռէքքէ ամեն դիշեր 200 նաբօլէօն կը շահի և Տիկին Մէլլա 200 անգլ. սկի: Լսկ Ռօսսի, Սալվինի, Թամանեօ, մէյ-մէկ միլիոնատէրեր էին. դեռ հարիւրներով կը հաշուին ուրիշ խել մը դերասաններ որ այսօր թատերական ասպարէզէն քաշուած են, բայց տարեկան հարիւր հազար ֆր. եկամուտ մը շինեցին վերջը:

Եւ կիրակի գիշերուան հասոյթը հարիւր ութսուն զրուշ արտադրեց:

Ազգի մը քաղաքակրթութեան աստիճանը թատրոններու հասոյթէն չափելու է և ոչ թէ «անձնասպաններու թիւէն» ինչպէս կըսէր ամերիկացի Տօքթօրը:

Կապօն մը և Մարտիկացի մը իրենց ծննդավայրերուն արգասաբերութեան վրայ կը վիճէին:

—Պօրտոյի մէջ, կըսէր կապօնը— բաւական է որ լուցկի մը ձգես դաշտին մէկ անկիւնը, տարի մը ետք ամբողջ անտառ մը կը բուսնի:

—Ատոր խօսքը կըլլայ, կը յաւելու Մարտիկացին, մեր երկրին հողը աւելի արգասաբեր է. փողոցին մէջ բանժալօնի կոճակ մը նետէ, և վեց ամիս ետք ձեռք մը հագուստ կունենաս:

Պսակի արարողութենէ մը ետք երկու հարսնեւորներ կը խօսակցին:

—Երբ փեսային ձեռքը սեղմեցիր շնորհաւորելու համար, ի՞նչ ըսաւ:

—Բերանը անգամ չի բացաւ... Մեծ վիշաբը համը կըլլան:

Դատարանին մէջ:

Նախագահը. — Կերեւի թէ գողութեան համար սպաննեցիր այդ խեղճ կինը:

—Այո՛, Պ. Նախագահ և միակ արդարացումն հող է:

—Ի՞նչպէս:

—Բնականաբար, եթէ գէշ մարդ մը ըլլայի, փոխանակ գողութեան՝ հաճոյքի համար սպաննած պիտի ըլլայի:

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱՒԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՍԹԻԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախողները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիներով:

Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրութեամբ կը պատրաստուին:

Անգլիական և ֆրանսական սքեսիալիքներ: Թաւմ հանգային ջուրեր, անուշահոտ քիւնք և և:

Բնաւորական և մանրադիտական քննութիւնը: Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծառայողները:

Բժշկական ձրի խորհրդածութիւնը սպասարկող համար: 10—50

ՍԱՐԳԻՍ ԳԱՐԱԿԻԶԷԼԵԱՆ

Ա. Ղ. Բ. ՍԱՆ Դ. Ի. Ա.

Կը մասալարարէ ամեն սեռակ տժուր, մանաւանդ ԳԱՐԵՐԹ, անմրցելի գներով և գոհացուցիչ պայմաններով:

Դիմել ի Սիֆէլ Կեփսա եւ կամ Հայոց Եկեղեցիին՝ Աղբաւանդիւս: 5—5

ՏՕԳԹՕՐ Կ. ՃԵՐԱՀԵԱՆ

Տօրթօր Կ. Ճերահեան այս անգամ Գահիրէ հաստատուած ըլլալով, իրեն գիտող հիւանդները պիտի ընդունի իր բնակարանին մէջ ի Շարա Գիթ-Պէյ թիւ 2 (մօտորը՝ Աթ Գէթ-Իւլ-Կիթէնա) ամեն օր, բայց կիրակիներէ, առաօտին մինչեւ ժամը 3(Յ.Մ.) լակ ժամը 3էն մինչեւ 5 կարելի է գինքը գտնել Արարատ դեղարանը ի Պէյ-Սիֆէլ, և 5էն 7 էօզ. պէթիէի վրայ Ֆարմաի աը լա Պօրս դեղարանը: 4—8



ՃԵՐԱՀԵԱՆ ԵՒ ԱՅԼԵ ԼՈՒԱԼՈՒ ՀԱՍՏԱՐ

Գ Ո Ր Ծ Ա Ծ Ե Յ Ե Բ

ԼԷՍՍԻՎ ՏԻԼ ԺԷՆԻՆ

Ծախքի եւ ժամանակի խնայողութիւն. — Մաքրութեան կատարելագործութիւն. — Արագութիւն եւ դիւրութիւն. — Ճերմակեղեններու եւ այլոց հակաճնխում:

ԿԱՐԵԻՈՐ. Լէսսիվ սիլ Ժէնին 21 ՄԱՇԵՑՆԵՐ

Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ 100,000,000 ֆիլօ տարեկան սպառում. — Գործածութեան կեցար խիստ դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գնուի:

Միակ ներկայացուցիչ յեգիպտոս

Կ. Վ. ԵԿԱԻԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Դահլիճ. ՊԱՋԱՐ ՄՈՒՐՈՒՐ 18—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԵՐԹԵԻԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԳԻՐԻՈՅ ԳԻԹ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3 կգ.	Օմիխ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմիխ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմիխ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմիխ. 1 2 3 կարգ	Էքսորէս 1 2 3 կարգ
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 30	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա	» 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
»	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղեքսանդրիա	» 6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԳԻՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԹ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Օմիխ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմիխ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Խառն առաւ.	Օմիխ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Օմիխ. 1 2 3 կարգ	Էքսորէս 1 2 3 կարգ
Աղեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանթա	» —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
»	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	» 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԷՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	» 12 28	7 48	» կայարան	» —	3 30
»	մեկ. 12 33	7 53	Խամպիլա	» 1 20	7 5
Ջակադիկ	» 1 34	8 54	»	» —	—
»	մեկ. 1 44	9 4	»	» —	—
Խամպիլա	մեկ. 3 40	1 —	Պէնհա	» 4 13	9 47
Սիւէզ կայարան	» —	5 —	»	մեկ. 4 17	9 4
Տօք (բարափ)	» 6 55	—	Գահիրէ	» 5 5	10 35